

ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

— 0 —

— ԲԱՇԽԵՆՑԱԿԱՆՆԵՐ ԸՈՒՅՃԱՆԻԿՆԵՐ —

Պ. Էման Բիլոն, Ֆրանսացի տաղանդաւոր երգիտաւարը գրազէտը հետեւեալը կը գրէ, « Լա Բիլոմ » դրական-գեղարուեստական կիսամսեայ թերթի Նոյեմբեր 15ի թուոյն մէջ, Պ. Բաշինջաղեանի Յուշահանգէսին մասին . « Պոլլապ Մոնրառնաս, հանդարտ ու համեստ աշխատանոցի մը մէջ, ուր Պ. Արշակ Չօպանեան զիս կ'առաջնորդէ, Պ. Գէորդ Բաշինջաղեան, հայկական զգրոցին լաւագոյն նշակարիչներէն մին, երեսունի չափ նկարները ցուցարժան է, Հառաարարմ նոթագրութիւններ Վրաստանի եւ Կովկասի բնագոտիներու, երեսուցիներ՝ պարզօրէն ու լրջօրէն նկարուած՝ լինելու, զայտի, լեռներու եւ ծովի, այդ գործերը ամփոփեալ տպագրութիւնը կուտան ջինջ ու անդրոք խառնուածքի մը, ամբողջ Խոսկումով ու հանդարտութիւնով շինուած է Պ. Բաշինջաղեան մասնաւորապէս կը յաջողի լեռը նկարել այդու կամ վերջալոյսի պահուն, երբ կատարները ամպերու մէջ կը կորսուին, եւ ունի միանգամայն զիւրբուան շատ ուշագրաւ « Էֆէններ » Միակ մեղադրանքը զոր կարելի է բնիկ իրեն, տեսակ մը շորութիւն է երանգներուն մէջ եւ մանրամասնութեանց ծայրայեղ սէր մը՝ որոնք այլ եւս մեզի անտարբեր կ'երեւան, թիրուծիւններ որ սակայն ամբողջութեանը մէջ կը կորսուին եւ չեն խանդարտի որք մէջ հայ բնակարարին գործը ունի՝ իր զրուսիկը զծարուծեամբն եւ հիմնաւոր ուսումնասիրութեամբը : Պ. Գէորդ Բաշինջաղեան, աղէն ծանօթ՝ Ռուսիոյ եւ Գերմանիոյ մէջ, արծառն է որ Ֆրանսայի մէջ ալ ճանչցուի, իր արուեստը սովորակաւնէն առարբէ է : Պ. Պ. Չաքարեանն եւ Էտակար Շահինի արուեստին հետ, պատուարք է ան իր անբաղք աջգիտն »

Պ. Բաշինջաղեան իր գործերէն մին նուիրած է Բիէն Քիլեատին՝ անոր հայախոսական գործունէութեանը համար իր երարխապիւստութիւնը յայտնելով : Քիլեատ իր շնորհակալութիւնները ուղղած է անոր՝ հետեւեալ նախով :

« Պարն, Էման Փիլոն բարեկամիս նոթը

լիւմին մէջ՝ արդէն փափաք ներշնչած էր ինծի ձեր գործերը տեսնելու եւ սիրելու, — եւ ահա՛ երէկ իմ հայ բարեկամներու շատ փափուկ մէկ հաճոյակատարութեամբը՝ սեղանիս վրայ դոյս ձեր Արարատի շատ զեղեցիկ մէկ բնակարար, ուրիմն այլեւս ուրիշի կարծիքին վրայ հիմնուելով չէ որ պիտի ճաշակեմ ձեր շատ լայն ու շատ տպագրիչ արուեստը :

« Թոյլ տուէք ինծի, պարն, ձեզ շնորհաւորել զիս ինչպէս հայրենակից մը . գուժ անգամ մը եւս տպագրուցիք թէ՛ ձեր ցեղը, արուեստագէտներու եւ բանաստեղծներու սնուցից, պէտք չէ եւ կարելի չէ որ անհետանայ աշխարհիս երեսէն՝ առանց ամբողջ մարդկութեան բարոյական ու մտաւորական մեղ կորուստ մը պատճառելու »

ՍՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷ. — Կովկասեան թերթերը ծանուցին Սորէն Եպիսկոպոս Ստեփանէի մահը Այդ մահը կարեւոր կորուստ մըն է ուսանակ հասարակութեան համար : Իբրեւ հրապարակախոյ, իբրեւ քարոզիչ, իբրեւ բանասէր, Սորէն Ստեփանէ շատ ազիւ ու վառաջուռն գործունէութիւն մը ունեցած է : Գլխաւոր գործը զոր կը թողու, եւ որ կը բաւէ իր անունը տեսական դարձնելու Հայոց ժամանակակից գրական պատմութեան մէջ, Սորէնացիի գրքին աշխարհաբար թարգմանութիւնն է, — միմտան օգտակար ձեռնարկ մը, որոն տառջին փորձոյն եղաւ ինքը, եւ միակն ալ է սակաւին :

ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՄՈՒՄ. — Մոսկուայի մեզի կը գրեն թէ շուտով լոյս պիտի տեսնէ այնտեղ հայերէն լեզուով գրական ժողովածու մը, խմբագրութեամբ մեր այլախոսակից Պ. Վ. Փափաղեանի : Այդ ժողովածուն պիտի պարունակէ միայն ինքնուրոյն եւ անտիպ գրուածքներ, եւ պիտի բաղկանայ 3-400 մեծադիր էջերէ՝ շքեղ տպագրութեամբ :

ՓԱՓԱՉԵԱՆԻ « ԱՌԵ ԲՈՇԱՆԵՐՈՒ » — Նմանապէս Մոսկուայի մեզի կը հաղորդեն թէ Պ. Վ. Փափաղեանի « Նայ բոլաներու » մասին մէկ ինքնառիտ աշխատութիւնը վերջերս կարողացուեալ է կայսերական ազգային ժողովին մէջ եւ ժողովը որոշեւ է զայն հրատարակել՝ պատկերներով՝ իր « Ազգագրական հանգէս » մէջ, եւ նախորդ Պ. Միլլէրի առաջարկութեամբ : Պ. Փափաղեան անգամ անուանուել է այդ

Պատրիստի :
 1885 հուն. 20
 Imprimerie P. L. BERT, 7 et 9, rue des Fossés-Saint-Jacques, Paris

Le Gérant : A. COTHIAS.